Հարցերին պատասխանում է քահանան...

Հարց 1. Երբ ես աղոթում եմ, որ Աստված իմ միտքը լուսավորի և առաջնորդի, ինչպե՞ս հասկանամ ի՞նչ է ինձ հուշում և ո՞րն է Նրա կամքը:

Պատասխան: Եթե մենք աղոթում ենք և ակնկալում, որ Աստված պիտի ինչ որ նյութական կերպով մեզ պատասխանի, ապա սխալվում ենք: Աղոթքը ոչ միայն ենթադրում է հստակ ու գիտակցված խոսք՝ ուղղված Աստծուն, այլ նաև՝ գործ: Օրինակ՝ եթե մենք աղոթում ենք, որ Աստված մեզ առաջնորդի և իմաստություն տա, ենթադրվում է, որ մենք պետք է անենք ամեն բան, որ Աստծուց չհեռանանք և իմաստություն սովորենք: Այսինքն մեր խնդրանք-աղոթքը նաև ուղեցույց է մեզ՝ ապրելու և գործելու: Աստծո կամքը պետք չէ կենցաղային ու առօրյա հանգամանքների մեջ փնտրել: Ս. Գիրքը սովորեցնում է, որ Աստծո կամքը մեր փրկությունն է: Եթե աղոթում էք, որ Աստված Ձեր միտքը լուսավորի ու առաջնորդի, ապա ինքներդ պետք է պայքարեք ու հասնեք այն նպատակին, ինչ դրել էք Ձեր առաջ:

Հարգելի ընթերցող, տեղեկացնում ենք, որ...

Համահայկական Աշխարհագրական Ասոցիացիայի և Հայաստանի Հանրային հեռուստաընկերության կողմից, ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ պատրաստվել է ֆիլմ Կարդինալ Գրիգոր-Պետրոս Աղաջանյանի կյանքի ու գործունեության մասին, երկու մասով: Այն մի մասն է Ջավախքին նվիրված «Ջավախք – Լեռնեցիների օրրան» հաղորդումների շարքի: Ֆիլմը կարող եք դիտել հետևյալ ինտերնետային հասցեում

http://armenianchurchco.com/1048.html#

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Փիլիպեցիներ 4 , 8-24

8Եւ վերջապէս, եղբայրնե՛ր, ինչ որ ճշմարտութեամբ է, ինչ որ՝
պարկեշտութեամբ, ինչ որ՝ արդարութեամբ, ինչ որ՝ սրբութեամբ,
ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբաւով, ինչ որ՝ առաքինութեամբ,
ինչ որ՝ գովութեամբ, - ա՛յն խորհեցէք։ 9Ինչ որ ուսանեցիք,
ընդունեցիք, լսեցիք եւ տեսաք իմ մէջ, ա՛յն արէք։ Եւ խաղաղութեան
Աստուածը թող լինի ձեզ հետ։ 10Ես չափազանց ուրախ եղայ Տիրոջով,
որ դուք էլ էք մտածել հոգ տանել իմ մասին, ինչպէս արդէն հոգում
էիք ինձ համար, բայց առիթ չէիք ունենում։ 11Կարիքի մէջ լինելու
համար չէ, որ ասում եմ այս բանը, քանի որ ես սովոր եմ գոհ լինել
իմ վիճակից։ 12Գիտեմ զրկանքով ապրել, գիտեմ առատութեան մէջ
լինել։ Ամէն ինչում, բոլոր պայմանների տակ, սովորել եմ թէ՛ կուշտ
լինել, թէ՛ քաղցած մնալ, թէ՛ առատութեան մէջ լինել, թէ՛ զրկանք
կրել։ 13Ամէն ինչի կարող եմ նրա՛ շնորհիւ, ով ինձ զօրացրեց։ 14Բայց
դուք լաւ արեցիք, որ օգնեցիք ինձ նեղութեանս մէջ։ 15Դուք էլ գիտէք,
փիլիպեցինե՛ր, որ Աւետարանի քարոզութեան սկզբում, երբ ես ելայ
Մակեդոնիայից, ո՛չ մի եկեղեցի տալու եւ առնելու հարցում չօգնեց
ինձ, բացի ձեզնից, 16որ մէկ-երկու անգամ իմ կարիքների համար
օգնութիւն ուղարկեցիք Թեսաղոնիկէ։ 17Ոչ թէ նուէրներ եմ փնտռում,
այլ փնտռում եմ այն պտուղը, որ աւելանալու է ձեր հաշուին։ 18Իսկ
ես ամէն ինչ առել եմ եւ առատութեան մէջ եմ. լիացած եմ
Եպափրոդիտոսի միջոցով ձեզնից ստացածս նուէրով, որ
անուշահոտութիւն է, ընդունելի պատարագ՝ Աստծուն հաճելի։ 19Եւ
իմ Աստուածը կը լցնի ձեր կարիքները իր հարստութեան չափով,
փառքով, Քրիստոս Յիսուսի միջոցով։ 20Արդ, Աստծուն եւ մեր Հօրը
փառք յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ 21Ողջունեցէ՛ք բոլոր սրբերին ի
Քրիստոս Յիսուս։ 22Ողջունում են ձեզ այն եղբայրները, որ ինձ հետ

են։ [23]Ողջունում են ձեզ բոլոր սրբերը, մանաւանդ նրանք, որ Կայսրի
տնից են։ [24]Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեր հոգու հետ լինի։ Ամէն։

Ղուկասի Աւետարան 11, 1-13

11 Եւ եղաւ որ Յիսուս մի տեղ աղօթքի էր կանգնած. եւ երբ
վերջացրեց, նրա աշակերտներից մէկն ասաց նրան. «Տէ՛ր, մեզ
աղօթել սովորեցրո՛ւ, ինչպէս Յովհաննէսը սովորեցրեց իր
աշակերտներին»։ [2]Նա նրանց ասաց. «Երբ աղօթքի կանգնէք,
ասացէ՛ք. [3]Եւ Յիսուս նրանց ասաց. «Ձեզնից ո՞վ է, որ բարեկամ
ունենայ, գնայ նրա մօտ կէսգիշերին եւ ասի նրան. բարեկա՛մ, ինձ
երեք նկանակ փո՛խ տուր, [4]որովհետեւ իմ բարեկամը ճանապարհից
եկաւ ինձ մօտ, եւ ես նրա առաջ դնելու ոչինչ չունեմ։ [5]Իսկ նա ներսից
պատասխանի եւ ասի. «Ինձ նեղութիւն մի՛ տուր, որովհետեւ դռները
փակուած են, եւ երեխաներս ինձ հետ անկողնում են, չեմ կարող վեր
կենալ եւ քեզ հաց տալ»։ [6]Ասում եմ ձեզ, եթէ բարեկամութեան
համար էլ վեր չկենայ եւ հաց չտայ նրան, նրա թախանձանքի՛
պատճառով վեր կենալով կը տայ նրան, ինչ որ պէտք է։ [7]Եւ ես
ասում եմ ձեզ. խնդրեցէ՛ք, եւ Աստծուց կը տրուի ձեզ, փնտռեցէ՛ք, եւ
կը գտնէք, բախեցէ՛ք, եւ կը բացուի ձեզ համար,[8]որովհետեւ, ով որ
խնդրում է, առնում է, ով որ փնտռում է, գտնում է, եւ ով որ բախում
է, բացւում է նրա առաջ։ [9]Ձեզնից ո՞վ է այն հայրը, որի որդին եթէ
ձուկ ուզի, միթէ ձկան փոխարէն օ՞ձ կը տայ նրան.[10]եւ կամ ձու ուզի,
միթէ կարի՞ճ կը տայ նրան։ [11]Իսկ եթէ դուք, որ չար էք, գիտէք բարի
պարգեւներ տալ ձեր որդիներին, որչա՛փ եւս առաւել ձեր երկնաւոր
Հայրը բարիքներ կը տայ նրանց, որոնք ուզում են իրենից»։ [12]Եւ
Յիսուս մի համր դեւ էր հանում. եւ երբ դեւը ելաւ, համրը խօսեց. եւ
ամբողջ ժողովուրդը զարմացաւ։ [13]Եւ նրանցից ոմանք ասացին. «Դա
դեւերին հանում է դեւերի իշխան Բէեղզեբուղի միջոցով»։

Մանկական էջ...

Այսուհետ մեր թերթում կտեղադրենք սկանվորդներ Մարի Մաշինկա ամսագրից, հուսով ենք ձեր երեխաներին դուր կգա և ցանկություն կառաջացնի՝ հայերեն սովորել...



Հայոց Մեծ Ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ....

Բենեդիկտոս 15-րդը մի անգամ ասել է.«Դժբախտ հայերը գրեթե ամբողջությամբ ուղարկվեցին ոչնչացման»: Իսկ նվիրակ Դոլչեն ասել է Քահանայապետին, թե, պաշտպանելով հայերին, ինքը կորցրել է Թալիաթ փաշայի, կամ, իր բառերով, այդ մասոնական Մեծ Վարպետի (Grand Master) բարեհաճ վերաբերմունքն իր նկատմամբ:

Պատմաբան Հեսմանը, խոսելով մերօրյա անցուդարձի մասին, փաստել է, որ երբ 2013թ. հունիսին Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետը հայտարարեց, թե հայերի ցեղասպանությունը «20-րդ դարի առաջին ցեղասպանությունն է», Անկարան Վատիկանից հետ կանչեց իր դեսպանին, և այժմ վերլուծաբաններին հետաքրքիր է, թե ինչպես պիտի թուրքական իշխանությունն ընդունի Քահանայապետի այցը Թուրքիա սույն թվականի նոյեմբերի վերջին: Պատմաբանը իր հարցազրույցում փաստում է, որ բոլոր չեզոք պատմաբանները քաջ գիտեն հայերի ցեղասպանության բոլոր զարհուրելի մանրամասները:

2015թ. Վատիկանը նախատեսում է գիքր հրատարակել, որտեղ հրապարակված կլինեն Հայոց Ցեղասպանության մասին պատմական եզակի տեղեկություններ:

Նյութի աղբյուրը՝ http://armenianchurchco.com/

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈԶԸ

«Սովորեցրո՛ւ մեզ՝աղոթել, ինչպես և Հովհաննեսն իրեններին սովորեցրեց» (Ղուկ. 11,1):

«Հա՛յր մեր, որ երկնքում ես»

Հայր մեր, որ երկնքում ես: Այսինքն՝ թեպետ երկինքն ու երկիրը փառքովդ ու զորությամբդ լի են, սակայն Դու՝ էությամբ անհաս Ինքնություն ես: Երբ Աստծուն Հայր ենք կոչում, պարտավոր ենք բարությամբ ու սրբությամբ Նրա հարազատ որդին լինել, որովհետև Նրանից ժառանգելու ենք երկնքի արքայությունը, ինչպես ասում է առաքյալը. «Ծառա չես, այլ՝ որդի, և եթե որդի ես, ապա և՝ ժառանգակից Քրիստոսի»: Երբ ասում ենք Հա՛յր, ցույց է տալիս իմաստությունը, որ հնագույն է ու հավիտենական՝ քանի որ ալևորությունը իմաստություն է, ասում է Սողոմոնը: Իսկ երբ ասում ենք մեր, ցույց է տալիս Նրա գութը, որ շարժում ենք մեր հանդեպ: Եվ ասելով երկնքում՝ Նրա զորությունն ենք հայտնի դարձնում: Քանզի ինչ էլ խնդրենք, Նա իմաստուն է, գիտի տալ, և քանի որ գթառատ է, կամենում է տալ, և քանի որ զորավոր է, կարող է տալ: Դրա համար մեզ ուսուցանեց ասել՝ «Հայր մեր…»:

«Թող անունդ սուրբ լինի»

«Թող անունդ սուրբ լինի, Հա՛յր, «թող լինի՛», այսինքն՝ ինչպես Քո անունը սուրբ է Քո կողմից, այնպես էլ մեր կողմից թող սուրբ լինի ո՛չ այսօր կամ վաղը, այլ միշտ և շարունակ։ Քո շնորհներն առանց խնայելու սփռի մշտապես մեր վրա։ Քո խնամքը հայրաբար թող միշտ լինի մեր հանդեպ, թեև մենք անարժան ենք դրան,- որպեսզի այնպիսի վարքով ապրենք, որ տեսնեն մեր բարի գործերը և փառավորեն Քեզ՝ Հայր, որ երկնքում ես։

«Թող գա Քո արքայությունը»

Հորն իր հանդեպ խնամքի ներքո պահելուց հետո, առավել բարձր խնդրանք է մատուցում, «Թող քո իմաստության ու հանճարի Հոգին գա Իմ մեջ և սովորեցնի ինձ՝ իմանալու Քո արքայությունը, որպեսզի կատարելապես հնազանդ լինենք Աստծուն։ Շատերը կան, որ հոգ չեն տանում և չեն խնդրում երկնքի արքայությունը, այլ անցավոր կյանք են

խնդրում ու երբեք չեն հագենում: Երանի նրանց որ նրանց հակառակ՝ ասում են՝ «Թող գա Քո արքայությունը»:

«Թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա»:

Այս խոսքը բազում մոտեցումներ ունի և մեծ է նրա զորությունը. «կամք» ասելով՝ այս մի խոսքով Տերը ցույց տվեց Աստծո բոլոր շնորհների իջնելը մեզ վրա: Աստծո կամքը մեղավորների դարձն է և հոգիների փրկությունը՝ մեղքի ու չարիքի բռնությունից, ինչպես ասում էր մարգարեի միջոցով.«Չեմ կամենում մեղավորների մահը, այլ նրանց դարձը չար ճանապարհից ու ապրելը, որպեսզի ապրեն և ճշմարտության գիտակցության գան»(Ա Տիմոթեոս 2,4): Որի համար պարտավոր ենք Աստծու կամքը կատարել:

«Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր»

Գիտենք, որ հացը երկու տեսակ է, այսինքն՝ հոգևոր հաց և մարմնավոր հաց: Եվ երբ մարմնավոր հացն ենք խնդրում, ոչ միայն հացը, այլև մարմնական բոլոր կարիքները խնդրում ենք հացի հետ: Իսկ հոգևոր հացը բազում է, այսինքն՝ ուսումը, որ մտքի կերակուրն է և կենաց հացը, որ Տիրոջ մարմինն է, իսկ այս հացը հանապազորդ է կոչվում, որովհետև հավատացյալներն առաքյալների ժամանակ ամեն օր հաղորդվում էին Տիրոջ մարմնից և հոգևոր ամեն ինչ խնդրում եին այս հացի հետ: Իսկ հացն ի՞նչ է, եթե ոչ Նրա գիտությունն ու սերը, որոնցով է մեր հոգու փափագը կերակրվում՝ այն սեղանից, որին Տերն Իր աշակերտներին հրավիրեց՝ ասելով. «Կուտեք ու կխմեք Իմ սեղանից Իմ արքայության մեջ» (Ղուկ. 22,30): «Եկեք կերեք Իմ այս հացից և խմեք գինին. սրանով կզորանաք՝ իմաստություն փնտրելու և փրկվելու, ատելու անզգամությունը և ապրելու» (Առակ. 9,5-6):

«Թող մեզ մեր պարտքերը, ինչպես և մենք ենք թողնում մեր պարտապաններին»

«Թո՛ղ մեզ, - ասում է, - մեր պարտքերը»: Իսկապե՛ս պարտք. որովհետև Նրա այսքան շնորհները մարմնով ու հոգով վայելելով՝ ինչպե՞ս կարող ենք Տիրոջ հրամանին հպատակվելուն պարտապան չգտնվել: Ուստի երբ այն չենք կատարում, վայելչապես և ճշմարիտ խոստովանությամբ մեր անձը պարտապան դատելով՝ ներում ենք խնդրում՝ ասելով. «Թո՛ղ մեր այն պարտքը, Ինչո՞ւ սխալ ենք թույլ տալիս որովհետև մարմնավոր ենք, որովհետև այս խավար կյանքում ենք շրջում,

Պատմաբան Հեսմանը հասկացել է, որ հենց դա է Պիոս 12-րդին ստիպել ավելի զգույշ լինել Ադոլֆ Հիտլերի հետ և ջանալ հրեաներին ավելի շատ օգտակար լինել ծածուկ միջոցներով: Այնուամենայնիվ, Հեսմանը մի քանի կարևոր փաստեր է բերել, ըստ որոնց Հռոմի Սուրբ Աթոռը տեղյակ է եղել հայոց ցեղասպանության գրեթե բոլոր մանրամասներին և այդ մասին հայտնել է միջազգային հանրությանը և իր աղբյուրների տեղեկությունների հիման վրա փաստել, որ թուրքական կառավարությունը ուզում էր իսպառ վերացնել հայկական տարրը Թուրքիայից, մասնավորապես խոսել է հայ կաթողիկեների, Երանելի Իգնատիոս Մալոյան եպիսկոպոսի սպանությունների մասին: Պապական նվիրակ Դոլչեն, ով տիրապետում էր հստակ տեղեկատվության, հորդորել է սուլթանի Մեծ Վեզիրին դադարեցնել հայերի զանգվածային սպանությունները: Նույն նվիրակը, 1915թ. մեծ արգելքներ հաղթահարելով, Մեհմեդ 5-րդին է փոխանցել Բենեդիկտոս 15-րդ Քահանայապետի նամակը, որով Քահանայապետը խնդրում էր սուլթանին՝ գթասիրտ լինել անմեղ հայերի նկատմամբ: Ավելին, պապական նվիրակները աշխատել են նաև Թուրքիայի դաշնակիցների հետ՝ խնդրելով նրանց միջնորդել՝ հայերի ջարդերը դադարեցնելու համար: Այս բոլորը ի զուր են անցել և ավելի են սրել հայերի վիճակը Թուրքիայում: Ըստ պատմաբանի, 1915-16թթ. Արևեմտյան Հայաստանում բնակվող հայ կաթողիկեների մոտ 87 %-ը սպանվել է, ինչը տոկոսային հարաբերությամբ նույնիսկ ավելի շատ է, քան սպանվել են հայ առաքելականները՝ մոտ 75 %:

Ի՞նչ է արել Հռոմի Սուրբ Աթոռը՝ հայերի Ցեղասպանությունը կանխելու համար. Գերմանացի պատմաբանի ուշագրավ հարցազրույցը և Վատիկանի գաղտնի արխիվների տվյալները

Zenit լրատվական գործակալությունը մի հարցազրույց է հրապարակել՝ գերմանացի հայտնի պատմաբան Միքայել Հեսմանի հետ (Michael Hesemann), ով ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայերի ցեղասպանության նկատմամբ Հռոմի Սուրբ Աթոռի դիրքորոշման մասին: Լրագրողին հետաքրքրել է, թե ինչու են շատերը քննադատում Պիոս 12-րդ Քահանայապետին առ այն, որ ակնհայտ կոշտ դիրքորոշում չի ունեցել՝ հրեական Հոլոքոստը կանխելու համար: Պատմաբանը այդ հարցի պատասխանը գտնելու համար ուսումնասիրել է Վատիկանի գաղտնի արխիվներում պահվող հայոց ցեղասպանության մասին մոտ 2000 էջ փաստաթուղթ և պարզել, որ Պիոս 12-րդը, նախքան Քահանայապետ լինելը, որպես Վատիկանի բարձրաստիճան պաշտոնյա, ծանոթ է եղել 1915թ. Բենեդիկտոս 15-րդ Քահանայապետի մեծ ջանքերին՝ դադարեցնելու հայերի ջարդերը, որոնք, ցավոք ապարդյուն են եղել և, նույնիսկ, էլ ավելի են գրգռել Մեհմեդ 5 սուլթանի և երիտթուրքերի ատելությունը հայերի նկատմամբ:

Բենեդիկտոս 15-րդ Սրբազան Քահանայապետ

որովհետև ունենք մտքի օրենքին հակառակ բնական օրենք, որն ակամա գերում է մեզ դեպի մեղքի օրենքը (Հռոմ. 7,23): Մարդկանցից ո՞վ է, որ սերը չի կամենում, ո՞վ է, որ թշնամությունից չի նեղվում: Կա՛ն մեղքերի այլ տեսակներ, որոնք գործվելիս մեր մարմնին հաճույք են պատճառում, ինչպես պոռնկությունն ու որկրամոլությունը, բայց թշնամության ախտը՝ ո՛չ բնավ, այլ երբ տիրում է մեզ վրա, հոգսերի ու ալեկոծումների, երկյուղի ու տարակուսանքների մեջ է մեզ գցում: Ուրեմն ինչո՞ւ ներելով՝ մեր անձին հանգստություն չենք պարգևում ու մեր եղբայրներին շահում: Արա՛ դու քեզ հնարավորը, ինչպես որ Աստծուց ես պահանջում Իրեն հնարավորն անել, ների՛ր եղբորդ, և քո երկնավոր Հայրն էլ քեզ կների: Ներելու գործը կամքի՛դ է պատկանում և ո՛չ թե մարմնիդ: մեր ներելը մեր կյանքի խաղաղությունն է ապահովում, իսկ մեր ներելու հետևանքով Աստծո ներելը մեզ՝ դեպի անվախճան կյանքն է առաջնորդում:

«Մեզ փորձության մի տանիր: Այլ փրկիր չարից»

Այստեղ «փորձություն» ասելով հասկանում ենք մեզ հետ շարունակ մարտնչող չարի ներգործությունը: չարն ինքնուրույնաբար մեզ հետ մարտնչելու իշխանություն չունի: նա մեր կամքից ու խորհուրդների՛ց է վերցնում պատերազմի նյութը՝ ըստ այնմ. «Ում համար պատրաստում եք ձեր անձերը, որ հնազանդվեք, ծառա եք նրան, ում հնազանդվում եք, լինի մեղքին, թե արդարությանը» (Հռոմ. 6,16): Երբ մենք ցույց ենք տալիս մեր կարիքը, նա գալիս է և դրանով մեզ շարժելով՝ փորձում, թե հաստատո՞ւն ենք Աստծո հանդեպ սիրո մեջ, թե ոչ, և բնական կրքին ավելորդի ցանկությունն է խառնում: Եթե կարողանում ենք օտարի և բնականի միջև ընտրություն կատարել, Աստծո շնորհով փրկվում ենք, իսկ եթե չենք կարողանում ընկնում ենք մեղքի մեջ: Ուստի անհրաժեշտաբար զգուշացնելով՝ Տերը մեզ սովորեցրեց աղոթել. «Մի՛ տար մեզ դեպի փորձություն»: Երբ մենք դավաճանողի խարդավանության պատճառով գնում ենք դեպի չարը իբրև դեպի բարին, Դու, որ տեսնում ես, որ դրա բնությունը չար է, իսկ մեզ բարի է թվում, երբ իրականում այդպես չէ, մի՛ թող, որ ինքներս մեզ ակամա չարիքի մեջ գցենք:

Մարմնիս կարիքի պահանջած անհրաժեշտությունների մեջ և իմ տկար բնության պատճառով անփորձ գտնվելով՝ թույլ մի՛ տուր, Ամենատես, որ փորձվեմ և շեղվելով սասանվեմ ու կորստյան մատնվեմ «Այլ փրկի՛ր մեզ չարից»: «Հավատարիմ է Աստված՝ մեր կարողությունից ավելի մեծ փորձության մեջ մեզ չի գցում, այլ փորձության հետ նաև ելք է տալիս, որպեսզի կարողանաք համբերել» (ԱԿորնթ. 10,13): Արդարև մեր Տերը ամեն ինչով նմանվեց մեզ՝, բացի մեղքից, որպեսզի Իր ողորմածությունը և օգնությունը ցույց տա, ու սովորեցրեց մեզ փրկվելու համար համբերել, աղոթել և հավատարիմ մնալ:

Մեռցնում ենք հպարտությունը և ապրեցնում խոնարհությունը:

Մեռցնում ենք նախանձն ու ատելությունը և ապրեցնում սերը:

Մեռցնում ենք բարկությունը և ապրեցնում համբերությունը:

Մեռցնում ենք խռովությունը և ապրեցնում խաղաղությունը:

Մեռցնում ենք ագահությունը և ապրեցնում ողորմածությունը:

Մեռցնում ենք որկրամոլությունը և ապրեցնում պարկեշտությունը:

Մեռցնում ենք բղջախոհությունը և ապրեցնում ողջախոհությունը:

Մեռցնում ենք ծուլությունը և ապրեցնում արիությունը:

Որովհետև այսպես անելով՝ ընդունելի է լինում մեր աղոթքը, որ ասում ենք Հայր մեր…

Ծայրագույն Վարդապետ Հայր Պետրոս Պետրոսյան

Մոսկվա 16 նոյեմբերի 2014թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐ

Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի հավատացյալները ՝ ի դեմս Ծ.Վարդապետ հայր Պետրոս Պետրոսյանի, ի սրտե շնորհավորում են համայնքի նախկին ժողովրդապետ, այժմ Հռոմի Լևոնյան վարժարանի ռեկտոր, մեծարգո և շատ սիրելի Թագակիր Ծայրագույն Վարդապետ հայր Գևորգ Նորատունկյանին ծննդյան տարեդարձի կապակցությամբ:

Սիրելի Վարդապետ, մաղթում ենք Ձեզ առողջություն, անսպառ ուժ ու եռանդ, ծով համբերություն և նորանոր տիտղոսներ և ձեռքբերումներ, որոնց դուք արժանի եք: Տիրոջ հրեշտակը միշտ պահապան լինի և առաջնորդի Ձեզ: Ձեր ոգևորիչ կենսախնդությամբ և բնատուր իմաստնությամբ միշտ դեպի բարին ուղղորդեք Ձեր հետևորդներին:

Ռուսաստանում և հատկապես՝ Մոսկվայում ձեզ անչափ սիրում, հարգում և միշտ սպասում ենք…

Մոսկվայի հայ կաթողիկե համայնք

16 նոյեմբեր 2014թ.